Կղպանք՝ գաղտնի գործով անսպասել վստակ է .

Կնիք՝ քիչ յայտնուած գաղտնիքէ մը պիտի օգտուիս .

Կնեհալար ըլլալ՝ գէշ մտքով գործածդ լաւ պիտի ըլլայ .

Կնունք՝ ուժ, շահ և պաշտպանութիւն .

Կոնակ՝ ամուսնական գործի մէջ պիտի գտնուիս .

Կոնակ գնել՝ վատ գործի ետեւէ կը քալես, լաւ չէ .

» գնել՝ օտար մարդ տունդ տանելէ զգուշացիր .

Կոյր՝ միամտաբար շատ կը խաբուիս .

Կսաւ՝ լաւ մատակարարութեամբ վաստակ է .

Կսակ՝ մերձաւորներէ պիտի բաժնուիս .

» ընել՝ ուրիշներու վաստակին աչք ունիս, լաւ չէ .

» կարդալ՝ չուզելով ուրիշի պիտի վնասես և պիտի վշտակիրիս .

Հ

Հաղուս տեսնել՝ ցանկութիւն և գէշ մտադրութիւն է .

» հաղնիլ՝ պարտաւորիչ նեղութիւն, բայց և պատիւ է մերձաւորներէդ .

Հաղուս կորսնցնել՝ հրամանի տակ պիտի մտնաս .

» հանել՝ գաղտնիքդ ուրիշին պիտի տաս .

» դեղին՝ հիւանդութեան նշան է .

» ճեւակ՝ խնդութիւն և վաստակ է .

» սեւ՝ անմիջական ցաւով արկած է .

Հաղալ՝ յանցանքի մը համար պիտի ամչնաս .

Հաղորդութիւն՝ ծանօթի մը բարիք պիտի ընես .

» առնել՝ ընկերներդ քեզի դէմ զինուած են .

Համբ քե խօսի՝ մեծ բարիքի մը պիտի տիրանաս .

Համբոյր տալ՝ համբուրողէն վնաս պիտի կրես .

Համբուրել՝ գործիդ մէջ նոր ընկեր մը պիտի ունենաս .

Հայելի՝ խորհուրդներուդ ոչնչութիւնն է .

Հայրդ՝ սխալներդ սկսած են բաղմանալ .

Համբ քլլալ՝ մէկը խօսքով պիտի խաբես .
Հանգոյց՝ ընկերութեան մը մէջ պիտի մտնես .
Հանգոյց քալել՝ օգնութիւն ընկերէ կամ զաւկէ .
Հաւատիլ՝ բարեկամի մը հետ պիտի աւրուիս .
Հասկ (ցորենի)՝ ջանքերդ պիտի արդիւնաւորուին .
Հասկ քալել՝ ուրախութիւն և յաջողութիւն է .
Հարս՝ բարի յոյս և խնդութիւն է .
Հարկիք՝ ընտանեկան աղմուկ և կռիւ .
Հարկիք քալ՝ սնոտի վէճի մը համար բարեկամներդ
պիտի վշտացնես .

Հարսանիք՝ տրամութիւն և վիշտ է .
Հարսուլիւն՝ նշան է տնական խռովութեան .
Հաց՝ յաջողութեան և բաղդի նշան է .
Հաց ուտել՝ շուտով բաղդի մը պիտի տիրանաս .
Հացագործ՝ բարի և յուսատու լուր մը կ'իմանաս .
Հացկերոյթ՝ նոր թշնամի մը պիտի ունենաս .
Հաւ՝ շատախօս և անօգուտ բարեկամ է .
Հաւկիթ՝ գործդ մեծ ապագայ ունի , շարունակէ .
Հաւկիթ կոտրած՝ տանդ մէջ հիւանդ պիտի ունենաս .
Հերկել՝ ապագայ լաւ վաստակի նշան է .
Հեղեղ՝ ջերմ սէր մը քեզ պիտի յիմարացնէ .
Հիւանդ՝ գործի և շահու նուազութիւն է .
Հիւանդամալ՝ ետ ձգած մէկ գործդ պիտի կատարես .
Հիմ դնել՝ զաւակներէ պիտի օգտուիս .
Հնդկահաւ՝ օտար կնիկ մը ետեւէդ ինկած է .
Հոգեվարք քլլալ՝ ժառանգութիւն պիտի ստանաս .
Հողակոյճ՝ վաստակ և վերջ ցաւերու .
Հողմահար՝ սիրային դէպք և արկած է .
Հով՝ համբաւ և հոչակ է , բայց անօգուտ .
Հովանոց՝ նեղութեանդ մէջ նեցուկ պիտի ունենաս .
Հոր՝ որչափ խոր այնքան վշտաւար է .

Հորք՝ ընտանեկան թեթեւ նեղութիւն է .
Հրախալութիւն՝ բարձր պաշտօն , բայց ոչ շահաւէտ .
Հրացան՝ ուրախութեան ձայն մը պիտի լսես .
Հրեւակ՝ նոր գիւտ մը պիտի հնարես .
Հրեւակ քլլալ՝ այնպիսի գործ մը պիտի կատարես որ
չառ մարդիկ վրադ պիտի խօսին .
Հրդեհ՝ անսպասելի ձախորդութեան մը պիտի են-
թարկուիս .
Հրդեհ քանդ մեջ՝ կասկածներդ պիտի իրագործուին և
պիտի վնասուիս .
Հրթիռ՝ պաշտօնի մը հասնելու փափաքդ չիրագործուիր .
Հրուցակ (հէլլա)՝ առժամեայ յաջողութիւն և յետոյ
անստոյգ կացութիւն .
Հօրաբոյր եւ ճօրեղբայր՝ ժառանգութեան վերաբերեալ
աննշան բաներու համար վիճաբանութիւն է .

2

Ձագ (կենդանեաց)՝ քաղցր օրեր պիտի վայելես .
Ձայն լսել՝ կասկածներով պիտի պաշարուիս .
Ձեռք լուալ՝ նեղութենէ պիտի ազատիս .
Ձերբակալում՝ յաջողութիւն գործի .
Ձեք՝ պարտքդ վճարելով պիտի հանգստանաս .
Ձի գնել՝ ուրախութիւն և սակաւ հոգ պիտի ունենաս .
Ձի ծախել՝ մեծ սխալ մը գործելով պիտի վշտակրիս .
Ձի գգուել՝ աղջկան մը վրայ շատ մտածելուդ նշանն
է , միտքդ ամփոփ պահէ .
Ձի հեծնել՝ փափաքներդ պիտի կատարուին .
Ձի ներմակ՝ բարի լուր և բարեկամ է .
Ձի ստեկած՝ բոլոր յոյսերդ պիտի փճանան .

Ձիթապսուղ՝ այսօր մէկէ մը պիտի խաբուիս.
 Ձիթապսուղ կանանց՝ աճապարելուդ համար փոքր վը-
 նասի մը պիտի ենթարկուիս.
 Ձիթապսուղ ուտել՝ դուն ուրիշը պիտի խաբես.
 Ձիւն՝ մէկը քեզի պիտի սպառնայ և վշտացնէ.
 Ձկնորս՝ մէկուն գործը պիտի խանգարես և զոջաս.
 Ձմեռ՝ սիրականդ քեզ կը փնտռէ.
 Ձուազեղ՝ տանդ մէջ կոխ պիտի պատահի.
 Ձու (թռչնոց)՝ ինքզինքդ փորձանքի պիտի մատնես.
 Ձուկ՝ խաբեբայ մարդու մը պիտի հանդիպիս.
 Ձուկ որսալ՝ գործի յաջողութիւն է.

Ղ

Ղամպար (լամպա)՝ յաջողութեան տկար յոյս է.
 Ղամպար վառած՝ շահ, հաճոյք և վաստակ է.
 Ղամպար քե լանկարծ մարի՝ սիրային դժբաղդ պատա-
 հար, կեանքի կորուստ և սուգ է.
 Ղամպար վառել՝ յաջող ապագայ և բարի զաւակներ.
 Ղեկնակ՝ ստացուածքէդ պիտի զրկուիս.
 Ղեկնակ կապել՝ նեղութիւն և պահպանութիւն է.
 Ղեկ նաւու՝ յոյս և ուրախութիւն է.
 Ղեկավարել՝ յաջողութեամբ նպատակիդ կը հասնիս.
 Ղեկ կոսրած՝ գործերդ պիտի աւրուին և վնասուիս.

Ճ

Ճագար՝ փոքր երախայ և ուրախութիւն է.
 Ճակնդել՝ յաջողելու համար երկար պիտի սպասես.

Ճանիմ՝ հանրային չարիքէ մը պիտի վնասուիս.
 Ճալբորդ՝ հին առնելիք մը պիտի դանձես.
 Ճալբորդել՝ հեռաւորէդ լուր մը պիտի առնես.
 Ճանն՝ գործէդ սկսած ես ձանձրանալ, զգոյշ եղիր,
 գործդ սիրէ. թէ ոչ կը վնասուիս.
 Ճառ կարդալ՝ օտարներ սկսած են վաստակդ ուտել.
 Ճառ գրել՝ քեզի գործիք ըրած են լուր չունիս.
 Ճգնաւոր՝ այսօր ուրախ ժամեր պիտի անցընես.
 Ճգնաւոր ըլլալ՝ բարեկամներդ խաբելով պիտի շահիս.
 Ճերմակեղէն՝ կնոջ հետ յարաբերութիւն կ'ունենաս.
 Ճերմակեղէն տեսնուլը եթէ կի՛ն է՝ անպատիւ գործի մէջ
 պիտի բռնուի և խայտառակուի.
 Ճննդուկ՝ սիրոյ մէջ պիտի յաջողիս.
 Ճննդուկ բռնել՝ սիրային յաջողութիւն և ապա զոջում.
 Ճննդուկ ստեղծած՝ սիրոյ անունով քեզ պիտի խաբեն.
 Ճրագ՝ զաւկի ցանկութիւն է որ պիտի կատարուի.
 Ճրագ մաւած՝ գաղտնիքներով չըջապատուած ես.
 Ճրագ վառած՝ յոյսերուդ զօրացումն ու վաստակ է:

Մ

Մածու սերելի ցանկութիւններ ունիս, որոնց
 պատճառաւ վիշտ պիտի կրես.
 Մածուն ուտել՝ ըրածէդ դուն գոհ ես, բայց ուրիշներ ոչ.
 Մագ՝ շռայլութեան մէջ ինկած ես, լաւ չէ.
 Մանիթակ՝ մեծերէ գովեստ պիտի լսես և ոչ չահ.
 Մառան՝ գաղտնիքդ դեռ դուրս չէ ելած.
 Մարմարիոն՝ թշնամիդ անողոքելի է, զգոյշ.
 Մաքի՝ մեծ վտանգ պիտի անցընես եթէ չատ չպտըտիս.
 Մազ ներմակ՝ քեզ տրուած խրատները կատարէ.

Մազ սեւ՝ յանդուգն գործ մը պիտի կատարես .
» կտրել լաւ կարծելով վատ գործ մը պիտի ընես .
» հիւսել՝ ստորին գործերու մէջ կը գտնուես և
սիրային գործերով պիտի անպատուուիս .
» քակել՝ մօրդ մէկ յիշատակը պիտի կորսնցնես .
Մանեակ՝ սիրոյ դաշինք և կապ է .
» զտնել՝ մէկու մը պիտի սիրահարիս .
» կտրուած ընտանեկան երկպառակում է .
Մասանի՝ պատիւ և իշխանութիւն է .
» զնել՝ ամուսնութեան մասին կը մտածես .
» կոտրած հարսնացուդ կոյս պիտի չըլլայ .
» կորսնցնել՝ մեծ վտանգ կամ կոշտ մահ է .
Մասնոց՝ փափաքած կինդ պիտի առնես և կամ աղջիկ
զաւակ պիտի ունենաս .
Մարգագետին՝ գոհացուցիչ վաստակ և ապագայ .
Մարգարիտ՝ աղջիկ զաւակ կամ հարսնացու է .
Մասնաւոր՝ անփնաս վախ մը պիտի ունենաս .
Մեղան՝ անմիջական վատ լուր է .
» քափել՝ կռիւ և վնաս կը ցուցնէ .
Մեղու՝ շնորհալի հարսնացու, սիրունի կամ կին է .
» եթէ խալթէ՝ առեւտուրի մէջ կորուստ .
» ծաղկի վրայ՝ գործերդ յաջողութեան մէջ են .
» սպաննել՝ գործաւորդ, ծառադ կամ ընկերդ
վշտանալով պիտի հեռանայ .
» փերակ մտնէ՝ տանդ մէջ ծածուկ մէկը ունիս .
Մեղր ուտել՝ գործի և վաստակի վնաս է .
Մեղր՝ շատախօսութիւն և կռիւ է .
Մարախ՝ գրպանդ գաղտնի ձեռք մը մտած է .
Մեղել՝ հին և անհաճոյ խօսքեր պիտի նորոգուին .
Մեսափ՝ նոր և լաւ շրջան մը սկսած է քեզի .
Միս՝ տանդ նկատմամբ գէշ նշան է .

Միս եփած՝ վախդ պիտի փարատի, լաւ է .
Մերկութիւն՝ ամբաստանութենէ մը անմեղ դուրս պի-
տի ելլես .
Միւրդ՝ պարապ բաներ, մտածելուդ նշանն է .
Միւրդ ուտել՝ թեթեւ հիւանդութիւն մը պիտի կրես .
Մկրատ՝ վնասակար վիճաբանութիւն է .
Մով՝ ընտանեկան անդորր կեանք .
» մարել՝ վախ, թախիծ և սուգ է .
» վառած յոյս, օգնութիւն և ուրախութիւն է .
Մուկ՝ մերձաւորներդ քեզ կը խաբեն և կը կողոպտեն .
» բռնել՝ տանդ մէջի գաղտնիքը պիտի իմանաս .
Մուրացկան՝ դրամ պիտի ստանաս .
» ըլլալ՝ շատ գաղտնիքներ պիտի իմանաս .
» քանդ մեզ՝ վիճակահանութենէ պարգեւ
պիտի շահիս .
Մուրե՝ ծանօթներէդ մէկը պիտի վշտացնես .
Մորուսաւոր կին՝ հրաշալի գործ մը պիտի ընես և աշ-
խարհ գովեստով պիտի խօսի վրադ .
Մորուք ամիլել՝ շնորհէ և շահէ պիտի զրկուիս .
» ներմակ՝ խրատ և զգաստութիւն է .
» շէկ՝ տնական անհաճոյ կեանք .
» սեւ՝ աշխատանք և վաստակ .

Յ

Յակիմը՝ առփական ցանկութեանց հետամուտ ես .
Յարդ՝ վաստակիդ յարգը չես գիտեր, չռայլ ես .
Յարդ ժողովել՝ վիճակդ նեղ է, ոչ ոք պիտի օգնէ քեզ .
Յղի կին՝ սպասած բարի լուրդ չուտով կ'ստանաս .
Յախճապակի՝ մեծ ծրագիրներ ունիս, իսկ գործ՝ ոչ .
Յիսուս՝ շատ նեղութիւններէ ետք երջանկութիւն է .

Ն

Նապաստակ՝ խաբեբայ մարդու մը պիտի հանդիպիս,
եթէ ամուսնացած ես, աղջիկ պիտի ունենաս.
Նարինջ՝ գեղեցիկ կնոջ մը հետ պիտի տեսնուիս.
Նաւ՝ հեռաւոր հիւանդ մըն է.
Նաւ մսնել՝ նոր գործի մը պիտի ձեռնարկես.
Նաւասորմ՝ գործերդ գէշ վիճակի մէջ են.
Նես՝ մերձաւորներդ քեզ կը դաւեն, զգոյշ.
Ներկարար՝ ուրիշը խաբել կ'ուզես, բայց դուն ես որ
պիտի խաբուիս.
Նիզակ՝ վաստակդ վտանգի մէջ է.
Նիզակամարս՝ տանդ կարասիներուն վտանգ կ'սպառ-
նայ, արթուն կեցիր.
Նու՝ լաւ հիւրեր պիտի ընդունիս և ուրախանաս.
Նուն՝ քեզ շուարեցնելու չափ առատ վաստակ և աղ-
ջիկներ պիտի ունենաս.
Նսարան՝ գործէդ սկսած ես ձանձրանալ.
Նսարան փայտէ՝ վիճակդ ապահով է, վախ չկայ.
Նսարան երկաթէ՝ եթէ դատ ունիս, պիտի կորսնցնես,
թէ ոչ գործերդ պիտի ձախողին.

Շ

Շագանակ՝ կնոջ մը հետ պիտի վիճիս և սրդողիս.
Շագանակ խորոված՝ նոր բան մը սորվելով պիտի ու-
րախանաս և ապագային պիտի օգտուիս.
Շուն՝ յոյս, ուժ և օգնութիւն պիտի գտնես.
Շունեք երէ վրայ յարձակին՝ շատ թշնամի ունիս և
խնդրեցնելու վիճակի մէջ ես.

Շուն քե աջէ՝ դատդ պիտի չահիս.
Շուն որ լուսնին հաջէ՝ քեզմէ օգնութիւն կ'ուզեն.
Շապիկ՝ գործի նեղութեան և անձկութեան նշան է.
Շապիկ սեւ՝ քիչ օրէն պատանք մը պիտի տեսնես.
Շաքար՝ բարեկամներդ քեզի պարապ յոյսեր կուտան.
Շաքար բամբէլ՝ շուտով կ'ապահայր պիտի ըլլաս.
Շեփոր՝ սիրականէդ բարի լուր մը պիտի առնես.
Շերամ՝ բաղդախաղէ զգուշացիր, կը մնասես.
Շենք օինել՝ վատտակ և համբաւ է.
Շենք քանդել՝ կորուստի և մնասի նշան է.
Շիւ պարապ՝ ամուլ ամուսնութիւն մը պիտի կ'աքես.
Շիւ լեցուն՝ ուրախութիւն և վաստակ է.
Շլրայ՝ թշնամիներդ քեզի դէմ միացած են.
Շրջագետս՝ քեզի դէմ լարուած դաւ մը կայ.
Շուշան՝ ազգականութիւններէդ մէկը տեսնելով պիտի
ուրախանաս.
Շտեմարան՝ նիւթապէս շատ պիտի յառաջդիմես.

Ո

Ոգնի՝ որքերու բարիք ընելով պիտի ուրախանաս.
Ոխար՝ վիճակդ կը լաւանայ, նախանձն ալ կ'աւել-
նայ, վերջդ միշտ բարի է.
Ոխար մորթել՝ նեղութեան մէջ պիտի իյնաս.
Ոխար սեւ՝ բախտդ աւրուիլ սկսած է.
Ոսկի՝ շահ, սէր և ուրախութիւն է.
Ոսկի շարոց՝ կրողին սէրն ալ քուկիներդ պէս ջերմ է.
Ոսկոր՝ անփոյթ հաճոյքէ մը ետք քիչ մը վիշտ է.
Ոսկոր կրծել՝ թէեւ անիրաւ, լաւ շահ մը պիտի ընես.
Ոսպ՝ ձրի վատտակ կը փնտռես բայց պիտի աշխա-
տիս վասն ոչինչի.

Աստիկան՝ թշնամիդ տկարացած կամ վաղցած է քեզմէ .
 Որք՝ բարի գործերուդ համար գովեստ պիտի լսես .
 Որք որդեգրել՝ կեանքի երկարութեան նշան է .
 Որք (խաղողի)՝ անկուսիդ սպասողներ կան .
 Որսորդ՝ լեզուէդ վնաս պիտի կրես .
 Որսորդութիւն՝ վաստակդ պիտի աւելնայ և շատ պիտի
 ուրախանաս եթէ խոհեմ չարժիս .
 Որումն՝ գործերուդ լաւ չես հսկեր, վնասդ մօտ է .
 Ուլ՝ երախայի հիւանդութեան նշան է .
 Ուղճ՝ մեծութիւն և պատիւ է, միշտ լաւ .
 Ուրուր՝ վաստակի և ստացուածքի սպառման նշան է .
 Ուրուական՝ ուխտագնացութեան նշան է և առ այդ
 ըլլալիք վնաս մը կ'ենթադրէ :

Չ

Չաման՝ չար գործերէդ ամչնալով կ'ուզես ինքզինքդ
 ծածկել, բայց միշտ պիտի յայտնուիս .
 Չամիչ՝ գործդ թէ և լաւ կը թուի, բայց վերջը լաւ չէ .
 Չորքան՝ հին բարեկամէ մը պիտի օգտուիս .
 Չուան՝ փոքրիկ չափ, բայց ապահով ու յարատեւ .
 Չուան սեւ՝ բաժանում և ցամաքային ճամբորդութիւն .
 Չուան քաղցել՝ թշնամիդ կրած ձախորդութեան վրայ
 պիտի ուրախանաս :

Պ

Պալատ՝ ցորեկները ցնորքներ կ'ունենաս, ոչինչ է .
 Պաւար՝ կնամուկութենէ զգուշացիր .
 Պայճ՝ բախտդ չուտով պիտի բացուի .

Պայտա՝ մեծի մը հետ վէճ և կռիւ պիտի ունենաս .
 Պանիր՝ շատ ցանկալուդ քիչ պիտի ունենաս .
 Պանդոկ՝ պանդխտութեան վրայ շատ կը մտածես .
 Պաս կամ ցանկ՝ ունեցածդ յափշտակելու կը միտին .
 Պասրոյգ՝ ինքզինքդ շատ կը չարչարես և զուր տեղը
 կը յոգնիս .
 Պասանք՝ զրամօժիտով կին կամ ժառանգութիւն .
 Պասառափաղ՝ վաստակդ ուրիշներ կ'ուտեն .
 Պասեքալմ՝ սիրոյդ միտս բարով ըսէ, որովհետեւ սի-
 բածդ ուրիշ մը գտած է .
 Պասկեր՝ պարզ ուրախութիւն և սէր է .
 Պասկեր գոլնաւոր՝ գոյնին համեմատ լաւ կամ վատ .
 Պասուանեան՝ հպարտ ըլլալուդ չես սիրուիր, խոնարհ
 եղիր .
 Պասիկնան՝ փոփոխամիտ ես և չես յաջողիր .
 Պասուհան՝ զրացիէդ գաղտնիք մը պիտի իմանաս .
 Պար՝ խօսքով լաւ . բայց գործով թոյլ ես, ատոր հա-
 մար կը վնասուիս .
 Պարսեզ՝ կնոջ մը ձեռքով բարիք պիտի վայելես .
 Պարսեզ չորցած՝ տանդ մէջ հիւանդութիւն է .
 Պարսիգպան՝ հաճոյքի ետեւէ շատ ինկած ես .
 Պարսք ընել՝ այս տարի շատ պիտի շահիս, յաջորդ տա-
 րիներուն շահդ հետզհետէ պիտի նուազի .
 Պղպեղ՝ կսկիծ և անակնկալ ցաւ է .
 Պնակ պարապ՝ պարապ տեղը կ'ակնկալես, բարեկամ-
 ներդ քեզ կը խաբեն .
 Պնակ լեցուն՝ բախտ և պատիւ պիտի ունենաս :

Ձ

Ձաճ՝ ընտանիքիդ անդամները պիտի բազմանան .

Ձաճուայ (ճախարակ)՝ ապահով վիճակ է .

Ձաղացպան եթէ պանդուխտ ես, չուտով տունդ
պիտի դառնաս, եթէ ծննդավայրդ ես՝ պիտի
ամուսնանաս, իսկ եթէ ամուսնացած ես՝ զա-
ւակ պիտի ունենաս .

Ձաղացք՝ մեծ տեղէ մը օգնութիւն պիտի ընդունիս .

Ձայլամ խենդ գործով մը ծաղրելի պիտի ըլլաս .

Ձայլամ մեռած՝ թշնամիներդ քեզ պիտի ոչնչացնեն .

Ձերմուկ՝ սիրային անյաջող փորձ մը եւս պիտի ընես .

Ձղջիկ՝ սիրային խաղերդ միշտ կը նշմարուին .

Ձուր մաքուր՝ ամէն կերպով բարի վարք .

Ձուր պղտոր՝ ընտանեկան խռովութիւն և վիշտ .

Ձուր սառած՝ վէճ, կռիւ և բաժանում .

Ձրհեղեղ՝ յօդացաւ պիտի ունենաս .

Ձորի՝ անակնկալ ճամբորդութիւն է .

Ձրհոր՝ վաստակ, բայց տաժանքով .

Ձրհոր ցաւեալ՝ չափու նուազութիւն և ցաւ է .

Ռ

Ռեհան (ծաղիկ)՝ կնոջմէ մը կարօտդ պիտի առնես .

Ռեհան քաղել՝ սիրային ցանկութիւնդ պիտի յաջողի .

Ռումք՝ ճամբուդ վրայ վտանգ կայ, զգուշացիր .

Ռումք ձգել՝ յուսահատ վիճակի մէջ ես և վերջդ շատ
արգահատելի պիտի ըլլայ .

Ս

Սագ՝ ամուսինդ քեզ պիտի հնազանդի .

Սաք՝ պատիւ, բայց միշտ վտանգաւոր .

Սալոր՝ զրպանէդ զրամ կը կորսնցնես .

Սալոր բաժնել՝ ճամբան զրամ պիտի գտնես .

Սաղաւարտ՝ ճամբորդութիւն կամ կռիւ է .

Սաղաւարտ հաղկիլ՝ ապահովութիւն և պատիւ է .

Սանձ՝ ուրիշներ վրադ պիտի իշխեն .

Սանդուխ՝ տաժանելի վիճակ ունիս, բայց վերջդ շատ
լաւ պիտի ըլլայ .

Սանճր՝ գործերդ անկանոն կ'երթան .

Սառ՝ սիրելիէդ պիտի բաժնուիս .

Սառի հալիլը՝ վիշտերդ պիտի սկսին պակսել .

Սասանայ՝ մեծ չահեր պիտի ունենաս .

Սասանայ բռնել՝ յարձակում պիտի կրես կամ պիտի
ծեծուիս .

Սասանայ ծեծել՝ նոր սիրական մը պիտի ունենաս .

Սուր՝ յաջողելու համար պիտի չարչարուիս .

Սարդ՝ սիրային թակարդի մէջ պիտի իյնաս .

Սափոր՝ կնոջ համար յղութիւն է, մարդու համար
յաջողութիւն և վաստակ .

Սելիս՝ նոր նոր փափաքներ պիտի արթննան մէջդ .

Սելիս ուտել՝ եթէ անուշ լիզուլ ըլլաս, պիտի յաջողիս .

Սեղան՝ ուրիշներու կարօտ պիտի ըլլաս .

Սեցեակ՝ ամուսնութենէդ դժգոհ պիտի մնաս .

Սեցեակ փակել՝ ամուսինէդ պիտի զատուիս .

Սեր՝ ազգականութիւններէդ մէկը պիտի տեսնես .

Սերկելիլ՝ քեզի անյարմար մարդոց հետ ես, լաւ չէ .

Սերմ՝ յոյսդ պիտի կատարուի, բայց ուշ.
Սերմանել՝ մօտակայ բարիք և յաջողութիւն է.
Սիսեռ՝ գէշ խօսելով թշնամի պիտի շատցնես,
Սիւն՝ հաստատ յոյս և յաջողութիւն.
Սիւն կոտրած՝ ծանր վտանգ կամ մահ է.
Սլոյց՝ ակռայի ցաւ պիտի քաշես.
Սնդիկ՝ խարդախի մը հետ գործ պիտի ունենաս.
Սնտուկ՝ սկսելիք գործդ կը յաջողի եթէ գաղտնապահ
ըլլալ գիտնաս.
Սնտուկ գնել՝ ճամբորդութեան վրայ կը մտածես.
Սնտուկ շինել՝ տունէդ մէկը պիտի ճամբորդէ.
Սոխ՝ թշնամիդ վրայ գէշ լուր կ'իմանաս.
Սոխ ժողովել՝ հիւանդութեան նշան է.
Սուլել՝ օգնութեան կարօտ պիտի ըլլաս.
Սուլիչ՝ քեզմէ օգնութիւն պիտի խնդրեն.
Սուցկի՝ անուցած յոյսդ տկար է, մի վստահիր.
Սուրբ՝ խարդախ ժարդու մը պիտի հանդիպիս.
Սուրհանդակ՝ ճամբորդութիւնդ ետ պիտի մնայ.
Սպունգ՝ մարդահաճոյ խաբեբաներու մէջ պիտի խնայ
որոնք վաստակդ պիտի ուտեն.
Սրինկ՝ շատ մի խոնարհիր, կ'ստորնանաս.
Սրուակ՝ վարքիդ մասին գէշ կասկածներ կան.
Սրուակ լեցուն՝ նուէր կամ բարի լուր մը կ'ստանաս.
Սոսիմ՝ գործերդ շատ աւելուած են, լաւ չէ:

Վ

Վագր՝ հզօր և օգտակար բարեկամ է.
Վահան՝ առողջութեան և զօրութեան նշան է.
Վանական՝ խաբեբայէ մը պիտի շորթուիս.

Վանգակ՝ սրտդ բոլորովին ուրիշին տուած, ես, չա-
փաւոր եղիր.
Վանգ՝ սրտի և քսակի նեղութիւն է.
Վառարան՝ շուայ ըլլալուդ պիտի աղքատանաս.
Վառօդ՝ թշնամիի կողմէ վտանգ և չարիք է.
Վարագոյր՝ սիրային գաղտնիքներդ պիտի յայտնուին.
Վարդ՝ սիրոյ և խնամութեան նշան է.
Վարունգ՝ տխրութիւն և գործի վնաս է.
Վերաւրլու՝ գողի հետ գործ պիտի ունենաս.
Վերմակ՝ անխոստովանելի գործերու մէջ ես.
Վերբ՝ ակնկալութիւնդ քեզ պիտի խաբէ.
Վիժու՝ սիրոյ մէջ խաբուած ես.
Վիշապ՝ անիրականալի տղայական միտքերով կը
կ'օրորուիս.
Վիշաւորուիլ՝ զրամի տեղ սէր պիտի ունենաս.

Տ

Տակաւ՝ մէկուն տուած գաղտնիքդ պիտի լսուի.
Տանիք՝ հպարտութիւնդ աւելնալու վրայ է.
Տանն՝ ուրախութիւն և շահ է.
Տառս՝ ծնողական ժառանգութիւն է.
Տոպրակ՝ հարստանալ պիտի սկսիս.
Տիկ՝ անխտանելի մարդոց մէջ կը գտնուիս.
Տուն՝ պիտի զրպարտուիս, բայց անվնաս պիտի մնաս.
Տուն բարձր՝ ամուսնութիւն կամ աղմուկ է.
Տուն նոր՝ արկածախնդրութիւն պիտի ընես.
Տուն ցած՝ խաղաղ կեանք և ուրախութիւն է.
Տուցկի՝ խանութէդ կամ գաւակէդ պիտի խնդաս.
Տախտակ՝ հաստատ և անփոփոխ վիճակ.
Տգրուկ՝ կեղծաւորներէ պիտի կեղեքուիս.

Յ

Յանց՝ թեթեւ վտանգ մը պիտի անցընես .
Յեխ՝ պիտի զրպարտուես և վնաս կրես .
Յորեն՝ բարիք, խնդութիւն և վաստակ է .
Յորեն քաղել՝ չէնք պիտի չինես կամ ստացուածք
պիտի գնես .
Յուլ՝ քեզ հետապնդող թշնամի ունիս .
Յօղ՝ առատութիւն և յաջողութիւն է :

Փ

Փայս՝ դիրքդ հաստատ և անփոփոխ կը մնայ .
Փայս վառել՝ գործիդ ապահովութիւնը պիտի նուազի .
Փաստաբան՝ խարդախ մարդերէ չըջապատուած ես .
Փեքակ՝ մինակդ չպիտի յաջողիս, ընկեր առ .
Փեսայ՝ ստացուածքդ վտանգի մէջ է .
Փեսուր ներմակ՝ բարի անուն և շահ է .
Փեսուր սեւ՝ վիշտ, սուգ և մահ է .
Փեսուր օգի մեջ՝ պատիւդ կորսուելու մօտ է .
Փիղ՝ զօրաւոր հակառակորդ մը կայ դէմդ որ սիրա-
յին գործերդ պիտի խանգարէ .
Փիղ բռնել՝ բոլոր գործերդ պիտի յաջողին .
Փղոսկր՝ մեծարժէք բան մը պիտի ստանաս, բայց
յարգը չգիտնալով պիտի կորսնցնես .
Փոքորիկ՝ չարերդ պիտի վերջնան .
Փող՝ հարսանիք կամ այլ հաճոյք պիտի վայելես .
Փող փչել՝ թշնամիէդ կամ ցաւէդ պիտի ազատիս .
Փոս՝ խորութեան չափովը վտանգ և վիշտ է .
Փօւռ՝ հարստութիւնդ պիտի աւելնայ և չափերու բա-
րիք պիտի ընես :

Ք

Քանանայ՝ վտանգի մը պիտի հանդիպիս .
Քանանայ ալեւոր՝ աւելի վտանգաւոր է, գուցէ չա-
րատանջ հիւանդութիւն և մահ է .
Քանանայ մեռած՝ մեծ չարիք մը պիտի խափանի .
Քաղաք՝ բարի նշան է, ուրիշ ոչինչ .
Քաղաք մտնել՝ գործդ պիտի նորոգուի և լաւանայ .
Քար՝ լաւ չէ, թշուառութիւն և ծանր գործ է .
Քար ժողովել՝ ուղեւոր կուռի մէջ պիտի մտնես .
Քացախ՝ կնոջ պատճառով վիշտ է .
Քացախ խմել՝ մեծ չարիք մը պիտի հեռանայ քեզմէ .
Եթէ պատահական դէպքի մը մէջ չբարկանաս .
Քսակ պարապ՝ գէշ չըջանի մը մէջ պիտի մտնես :

Օ

Օդ պայծառ՝ բարի լուր և գործի յաջողութիւն է .
Օդ մթնալ՝ լուսախաբութիւն և տաքնապ .
Օդ փոքորակալի՝ փոքր վիշտէ մը ետք ուրախութիւն .
Օմիս՝ կրննրէ զգուշացիր, քեզի դէմ չարիքներ կը
նշխեմես և պիտի գործադրեն .
Օձ՝ կնիկ մը պիտի խաբէ քեզ .
Օձ քե խօսի՝ աշխարհի գործ մը պիտի կատարես որ
աշխարհ պիտի զարմանայ .
Օձ սպաննել՝ թշնամիդ պիտի ընկճես .
Օձ քե խալթե՝ չարակամներէդ պիտի ազատիս .
Օձ անկողնիդ մեջ՝ կին է, որ պիտի վնասէ քեզի .
Օձ քանդ մեջ՝ ընտանեկան մեծ տագնապ է .

Օձաձուկ՝ ընտանեկան երկպառակութիւն է .
Օձիգ՝ ամուրիի համար ամուսնութիւն է , իսկ ամուս-
նացեալի համար նեղութիւն և չարիք .
Օղ՝ սիրային յարաբերութիւն է .
Օղ աւանջը դնել՝ սիրային յաջողութիւն է .
Օղ աւանջեմ հանել՝ սիրային ձախորդութիւն .
Օղակ՝ սէր և բարեկամութիւն է .
Օղակ շինել՝ ամուսնական միջնորդութիւն է .
Օղի՝ վտանգաւոր կացութեան մէջ ես .
Օղի խմել՝ յանդուգն գործ և փնաս է .
Օնառ՝ կսկիծ և անհաճոյ լուր է .
Օշարակ խմել կամ տեսնել՝ անդորրութեան և առող-
ջութեան նշան է .
Օթօւօյիլ՝ տեսնողը եթէ այր մարդ է , գործի յաջո-
ղութեան նախանշան է , եթէ աղջիկ է՝ քիչ
ատենէն կը նշանուի . առ հասարակ լաւ է .
Օթօւօյիլ փառղ՝ ամէն բանի մէջ չափաւոր եղիր .
Օթօւօյիլ սրաւեսա՝ եթէ ձախորդութեան մատնուիս ,
քեզմէ զատ ուրիշ պատասխանատուներ մի
փնտռեր .
Օթօւօյիլ կոսրած՝ կրելիք փնասդ ծանր է թէպէտ ,
բայց դարմանումը անկարելի չէ .
Օդանա՝ եթէ օդին մէջն է , երազներուդ և յոյսերուդ
ցնդումն է , իսկ եթէ գիտնի վրայ է՝ յաջողու-
թեան նախանշան է .

Վ Ի Ճ Ա Կ Ա Ր Ա Ն

Ա	Է	Ջ	Չ	Տ	Փ
Լ	Բ	Ը	Ղ	Պ	Ր
Յ	Խ	Գ	Թ	Ճ	Ձ
Ռ	Ն	Ծ	Դ	Ժ	Մ
Ֆ	Ս	Շ	Կ	Ե	Ի
Փ	Ի	Վ	Ո	Հ	Զ

Վիճակացոյց տառեր, որոնց վրայ աչքդ գոցելով
մատդ պիտի զննես.

Սոյն գործողութիւնը պէտք է ընել Շաբաթ օրեր
արեւամուտէն ետք մինչեւ կիրակի արեւամուտ.

Ա.

Սիրտդ անարատ է և հոգիդ մաքուր, արտակարգ ձախորդութիւններ քեզ վշտացուցին, բայց դուն միշտ մնացիր սրտովդ բարի և ոչ ոքի չմեասեցիր: Հեռու չէ մխիթարութեան ժամանակը: Քաջ և վստահ եղիր և շուտով ամէն տրամութիւն մոռնալով երջանիկ պիտի ըլլաս:

Բ

Բաղդաւոր և բարի ժամու ծնունդ ես. թէեւ տխրութեան օրեր պիտի ունենաս, բայց անփոյթ եղիր և հանդարտ, ամէն ինչ կ'անցնի և դուն կը զայն շատ բարիքներ:

Գ.

Գոհ եղիր, որովհետեւ չար ժամերը անցուցիր, ուր կրնայիր իյնալ խորխորատի մէջ: Լսեցիր վատերու չար խորհուրդները, բայց հաւատքին զօրութեամբը խոստովեցար փորձանքներէ: Զգուշացիր չար խորհուրդներէ:

Դ.

Դրախտի դուռը բացուեցաւ քեզի, բայց դուն չի գիտցար: Ինկար բազում սխալներու մէջ, մեասեցիր, առանց սակայն ծանր վտանգի մը ենթարկուելու, որովհետեւ շուտ սթափեցար: Արդ, միշտ արթուն կեցիր որպէսզի բազմ և բարի ապագայ ունենաս:

Ե

Երջանիկ և զուարթ եղիր, որովհետեւ չարիքը հեռացաւ քեզմէ և բարիքը մօտեցաւ: Բոլոր զրկանքները որ կրեցիր, վերջացան: Զրկուեցար ծնողական ժառանգէ և բարեկամներու օգնութենէ, առանց սակայն յուսահատելու: Ասկէ վերջ պիտի ունենաս բազում վաստակ և չափ, պիտի ստանաս պատիւ և համբաւ, և պիտի ապրիս երջանիկ մինչեւ խոր ծերութիւն:

Զ

Դուն ընտանեաց զարդն ես և զուարթութիւն բարեկամաց, բայց սրտիդ պարզութիւնը և ուղղամտութիւնը միշտ օգտակար չին ըլլար քեզի և յաճախ կը մեասես: Ասկէ վերջ քիչ մըն ալ խորախորհուրդ եղիր և ոչ բոլորովին սրտաբաց, որով միայն յաջողութեան և երջանկութեան կը հասնիս:

Է

Ողորմելի արարած, ինչո՞ւ կը տառապիս և կը տրտմիս, երբ դու ինքզի ես որ քու դժբախտութիւններդ կ'ստեղծես: Ծոյլ ես և չես աշխատիր. բարիին ճամբան թողլով չարին կը հետեւիս, կը ստես, կը խաբես, կը զրպարտես և յետոյ կ'ողորաս առանց զղշումի: Զար ճամբաներէ հեռացիր, որպէսզի հասնես գոտեմէ:

Ը

Զրկուեցար հայրենի ժառանգութենէ, ընտանիքէ՝ օտարացար, բարեկամներուդ աւրուեցար, ճակատագիրը այսպէս տնօրինած էր քեզի համար: Սակայն այժմ տխուր ճակատագիրդ իր վախճանին մօտեցաւ և դուն շատ մօտ կը գտնուիս մեծ բաղդի, ճոխութեան և փառքի: Քաջ եղիր և ուրախ:

Թ

Թեւաւոր թռչունի նման թափառեցար՝ առանց հեռատեսութեան և հասուն խորհուրդներու: Թառեցար ահաստատ ճիւղերու վրայ, մտար անկանիկ ճամբաներու մէջ, ամէն կերպով եղար միամիտ և վշտեցիր: Սրդ, բաւ համարելով զժրադր անցեալդ, ինքզինքիդ եկուր:

Ժ

Կեանքիդ օրերը պարապ անցուցիր, ցաւալի է, բայց ճակատագիրդ այդպէս էր, որուն հպատակեցար անտրտունջ: Սակայն տխուր օրերդ անցնելով, կուգան երջանիկ և բարի օրեր, երբ պիտի կրնաս, անցեալդ յիշելով, աշխատիլ յոյսով և հաւատքով, որովհետեւ կը վերջանան սեւ օրերդ և տխուր ճակատագիրդ:

Ի

Իսահակի պէս մօտեցար զոհուելու, երկմտեցար, առանց յուսահատելու, որովհետեւ հաւատքդ զօրաւ

ւոր էր: Վստահ եղիր որ այդ հաւատքը քեզի պիտի առաջնորդէ զէպի մեծ յաջողութեան և լաւագոյն ապագայի: Քու նշանաբանդ, — հաւատք և համբերութիւն, — հաստատ պահէ, անոնք քու բաղդիդ և յաջողութեանդ կօրիզն են:

Լ

Մտիկ րբէ: Ամէն բան փոփոխական է, և լաւ վիճակդ զոր ունիս այսօր, մնայուն չէ. կուգան զրժուար և թշուառ օրեր՝ ներկայ կացութիւնդ փոխակերպելու համար: Ուստի, ինչպէս մրջիւնը ձմրան համար կը պաարաստուի, արթնամտութեամբ պաշար հաւաքէ, շտեմարանէ և պահէ, որպէսզի կարօտ չըլլաս, մինչեւ ալն ատեն, երբ բաղդիդ անիւը դարձեալ զէպի բարին կը դառնայ:

Խ

Կը կարծես թէ շատ խելացի ես: Կը սխալիս: Թո՛ղ անպէտք խորհուրդներդ: Դուն կը նմանիս այն անմիտ քիմիագէտին, որ պղինձը ոսկիի վերածելու փորձերուն մէջ, ոսկին է որ պղինձի կը վերածէ: Բարին հետեւէ, օրինաւոր և մաքուր ճամբէն քալէ, որպէսզի չարէն ազատելով, յաջողութիւն և բարիք վայելիս:

Մ

Միծեռնակի նման ճիւղէ ճիւղ կը թռչկոտիս առանց դադարի. չունիս հաստատուն, վճռական և

ուղիղ գործ . փայլուն յոյսն ու խոստումները չեն կարող քեզի պարգեւել ո՛չ լաւ ներկայ և ո՛չ ալ բարի ապագայ : Արդ , յիշելով անցեալդ , ցանկութիւններդ չափաւորէ , հաստատամտութեամբ գործէ և կը յաջողիս :

Կ

Կռունկի պէս կ'ողբաս անցեալ փառքդ և ղիրքդ զոր թշնամիներդ կողուպտեցին , կարօտը ըրին քեզի ամէն բանի , և դուն , տկար արարած , համակերպեցար ճակատագրիդ : Բայց արդ , եկած է ժամանակը , երբ պիտի կրնաս բոլոր կորուստներդ կրկին ստանալ , հարստանալու և ճոխանալու : Սակայն մի՛ մոռնար որ քեզի պէս շատ մը հարստահարեալ խեղճեր կան որոնց պարտաւոր ես օգնել :

Հ

Երբեմն հասարակաց սեղանէն կերակրուեցար , բայց երբ վիճակդ բարեփոխեալ , հպարտ և ապերախ եղար : Բայց գիտցիր որ նորէն կարօտ ու թշուառ պիտի ըլլաս , և եթէ կ'ուզես որ չքաւորութեան չի մատնուիս կրկին աճապարէ երախտահատոյց և բարերար ըլլալ գոնէ՛ հացի կարօտ մերձաւորներուդ , թէ ոչ՝ փորձանքը շատ հեռու չ քեզմէ :

Չ

Շուտով ցնծութեան ձայնը պիտի լսես . յուսահատ վիճակիդ փոխարէն՝ վերահաս բարիք կայ քեզի

համար : Բաղդաւորութեանդ օրը մօտ է : Սրտիդ մաքրութիւնը քեզի արժանի ըրաւ այդ մեծ բաղդին : Արդ , փառք տալով Աստուծոյ , ապրէ գոհ և երջանիկ : Թու բարութիւնդ քեզ վարձատրեց :

Ճ

Ճարտար լիզու և հանճարեղ միտքդ չկրցան քեզ օգնել , վասնզի , ճշմարտութենէ հեռու , խոտոր ճամբու մէջ կը գտնուէիր : Երբեմն կը սթափիս թէպէտ , բայց դժբախտաբար վատ ընկերներէ չրջապատուած ես : Մի հետեւիր անոնց , ուղիղ ճամբան մտիր , և շուտով կը գտնես անձիդ փրկութիւնը և կ'ըլլաս երջանիկ ու անդորր :

Մ

Մեղաւորին մահը վատ է , և դուն միշտ մահը կը հալածես , և ամէն բան միտքէ հանած , կիանքիդ վերջալոյսին կը դիմես յիմար գործերով , որոնք կիանքը կրճատելու կը ծառայեն : Մտադրած խորհուրդդ շատ վտանգաւոր է , զանկա շուտով հեռացուր քեզմէ , և արդարութիւնը ընտրելով քեզ առաջնորդ , գործէ մաքուր սրտով ու խղճով , եթէ չես ուզեր սաստկացնել դժբախտութիւնդ , որ մահուան չափ մեծ պիտի ըլլայ :

Յ

Յոյսը՝ յուսալով չիրականանար , եթէ գործդ չօժանդակէ անոր : Բարի այլ միամիտ ես և միայն կը յուսաս . « Հաւատք առանց գործի մեռեալ է » կ'ըսէ

Ս. Գիրքը: Այսպէս, յոյսը առանց ջանքի անօգուտ է: Թո՛ղ ծուլութիւնդ ու անհոգութիւնդ, և շուտով պիտի բախտաւորուիս, վասնզի աստղը բարեգուշակ է:

Ն

Նաւու նման տատանեցար և քու կեղծ բարեբեկամներդ քեզի մինակ թողուցին: Տակաւին քաշելիք ունիս, բայց ատոնք բոլորը պիտի անցնին և դուն որպէս կրակի մէջ փորձուած ոսկի, պիտի զլտուիս և մաքրուիս ու հասնիս խաղաղութեան նաւահանգիստը:

Շ

Շուշան էիր չնորհալի ու թառամեցար, բայց առաքինութեան արմատն ունէիր, կրկին ճիւղաւորուելով, զօրացար, և ժամանակը մօտ է երբ բարեբար ձեռքով մը զօրացած, առաւել չնորհազարդ և երջանիկ, պիտի բարգաւաճիս ու պիտի ըլլաս փառք և պատիւ անձիդ և գերդաստանիդ:

Ո

Որոգայթ որսացողին չկրցաւ ընկճել քեզ, վասնզի առաքինութեամբդ կարողացար ոտնակոխ ընել զայն, բայց ցաւալի է որ յաջողութենէդ չլացած հպարտացար: Բաւական տուժեցիր և դեռ պիտի տուժես, եթէ երբեք յարատեւես հպարտութեան և անձնապատանդութեան մէջ: Արդ, յիշելով մեծ խրատը

«Թէ յամենայն ժամ արթուն կացէք», զգոյշ եղիր, յուսայ առ Տէր, որպէսզի ամէն չարիք անհետանայ քեզմէ:

Չ

Չարիք չկայ առանց պատճառի: Դուն մոռնալով գործած չարիքներդ, կրած չարիքդ դժբախտութեանդ կը վերագրես, ինչ որ պարզապէս հետեւանք են անձնական արարքներուդ: Եթէ կ'ուզես չարիքէ խոյս տալ, փոխէ՛ ընթացքդ և դարձիր դէպի բարին, որով պիտի գտնես յաջողութիւն և ապրիս երջանկօրէն:

Պ

Շահամոլութիւնը և կեները առ հասարակ պատե՛րազմի պատճառ նկատուած են: Հոս տեղը չէ այս հարցով զբաղիլ, բայց դուն առաջնորդուելով այս երկուքէն, այսինքն շահամոլութենէ և կեներէ, բաւական չարիք կրեցիր, և հիմա թէպէտ զգաստացած կը թուիս, բայց և այնպէս չհեռացար առջի ճամբէդ: Ուստի, եթէ կ'ուզես որ վերջդ լաւ ըլլայ, բոլորովին հրաժարէ յիշեալ մոլորութիւններէդ:

Ջ

Ջանքերդ ջանքերու նման վառեցան՝ լուսաւորելով ուրիշները: Չափազանց անձնազոհ եղար, առանց մտածելու անձնական շահդ: Ապերախտութիւնը պաշարեց քեզի: Սակայն մի յուսահատիր, բաժակ մը ջուրն իսկ իր վարձքն ունի: Շուտով պիտի գտնաս

միտիթարիչ ձեռք մը, որ ամէն կերպով պիտի փոխարինէ քու բարեգործութիւններդ և զուն դո՛ւ պիտի ըլլաս:

Ռ

Մանուկ հասակէդ սկսեալ կեանքդ ռազմ ու պատերազմ եղաւ, բայց դեռ յաղթական չելլար այդ պայքարէն, որովհետեւ շատ անգամ յուսահատեցար: Սակայն վստահ եղիր որ շատ մօտ է յաղթական ապագայ, որուն պտուղը պիտի վայելես, հաւատարմութեամբ յառաջ վարելով ներկայ անվեհեր ընթացքդ: Վիճակդ լաւ է:

Ս

Սուրբ սիրտ և բարի գործ ընտրեցիր քեզի սկըզբունք, բայց շուրջդ հակառակը գտնելով, վշտացար: Սխալ է դատաստանդ, պարտիս բարի գործել և չի խռովիլ բնաւ, վասնզի աւետեաց ձայնը պիտի լսես հեռաւոր տեղէ, և քիչ ատենէն պիտի համոզուիս այս ճշմարտութեան, վայելելով սրտիդ մաքրութեան և բարի գործերուդ պտուղները:

Վ

Վե՛ր, միշտ վեր կը նային աչքերդ, վերերը կը տառառնի և միտքդ: Մուգար երբեմնի խոնարհամրութիւնդ և խաղաղ կեանքդ, յոփշտակուեցար փայլուն պրտահորէ մը որ ասուպի նման անցաւ: Պիտի գան դեռ նեղ օրեր, որոնք երկար պիտի տեսն,

այնքան երկար՝ որքան միտքդ բարձրէն կը թռչկոտի: Ուրեմն, վիճակիդ փոփոխութիւնը քու ձեռքդ է, Մտածումներդ չափաւորէ և կը յաջողիս:

Տ

Աստուած քեզի տուած էր երջանիկ ապրելու միջոցները, բայց երկնային այս պարգեւը չգնահատեցիր և միշտ ստորին կիրքերու ետեւէ ինկար: Բնական էր որ յետոյ զղջայիր, և զղջացիր, բայց կորուստներդ չկրցար վերստանալ: Արդ, հաշիւ տուր անձիդ և զգաստացիր, հեռու կեցիր վատ կիրքերէ, եթէ կ'ուզես որ կորսնցուցած բախտիդ վերստին տիրանաս:

Բ

Վայրկեան մը մի կորսնցնէր, վասնզի ա՛յ չափազանց եղաւ ծուլութեամբ կորսնցուցած ժամանակդ և դրամդ: Ճիշդ ատենն է գործելու, ինչ որ միտքդ պրծած ես խելոյն սկսէ գործադրել, վստահ ըլլալով որ պիտի կատարեալապէս յաջողիս:

Յ

Յանկացար և ստացար ան՝ որուն կը փափաքէիր, և յանկարծ սէրդ սառեցաւ, երջանկութիւն համարածդ այժմ քեզի վիշտ կը պատճառէ, Ընտրութեանդ մէջ չարաչար սխալեցար, թէեւ պատճառ մը կար քեզ այդ ընտրութեան մղող, բայց դուն ազատ էիր և կրնայիր ընդդիմանալ, սակայն թոյլ գտնուեցար... Արդ, փրկութեան ուրիշ միջոց չկայ, եթէ ոչ ամէն բան թողուլ և ազատ ըլլալ:

Ի


Հիւանդութեամբ մարմինդ հեւծեցաւ, քանզի անհաւատարիմ եղար պարտականութեանդ մէջ: Ոչ խղճի ձայնը լսեցիր և ոչ օրինաց ազդարարութիւնը: Քեզ զբաղում ընտրեցիր չար խօսքն ու չար գործը, որոնք քեզ հասցուցին դժբախտութեանց դուռը, ուրկէ ազատելու ճամար պարտիս լեզուդ և գործդ փոխել ի բարին, որով միայն կարելի է սղասել բարի օրեր և մխիթարական վիճակ:


Փ

Փառք տուր Աստուծոյ որ փառաւոր աստղի տակ ծնար, եղար առոյգ, քաջառողջ և խելացի, և ուշիմ կրթութեամբ: Բայց աւա՛ղ, մարդկային վիճակը անփոփոխ կարծելով ազգագայիդ մասին չխորհեցար, չահեցար ու չռայեցիր: Ուրեմն փութայ սխալներդ դարմանել և շուտով պիտի վերստանաս կորսնցուցած բախտաւորութիւնդ: Վիճակդ յուսալից է:

Ք

Քեզ վիճակեցաւ «Ք» վերջին տառը, իբր նշան քաւութեան բոլոր գործերուդ, որոնց պատճառաւ կրեցիր շատ չարիք: Սակայն ուրախ եղիր որ սխալներդ ճանչնալու կարողութիւնն ունեցար, որով զըժուարութիւն չափաի քաշես զանոնք ուղղելու, ինչ որ անհրաժեշտ է: Քաշածդ բաւական եղաւ, քաւութիւնը կատարեալ է և շատ վերահաս է ուրախութիւն և բախտաւորութիւն, զորս պիտի վայելես մինչեւ կեանքիդ վերջը:





ԳԻՆ Ե.Դ. 5

2013

23386

<< Ազգային գրադարան



NL0057541

